ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ, 2-22-37, ani.shirak@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ N 218

20 հուլիսի 2020 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ /ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ՀԱՅԿԱՁՈՐ/ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 17-ի թիվ 57 որոշումը, *որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող /բնակավայր՝ Հայկաձոր/ սույն որոշման N 1 հավելվածում նշված գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտ հողատեսքի 3 կտոր հողամասերի օտարման աճուրդը անցկացնել 2020 թվականի օգոստոսի 25-ին, ժամը 12:00-ին, իսկ երկրորդ աճուրդը (կրկնաաճուրդը) 2020 թվականի սեպտեմբերի 4-ին, ժամը 12:00-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցի շենքում (հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ, Մաղաթյան 2):

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի մշտական գործող աճուրդային հանձնաժողովին (նախագահ՝ Արտակ Գևորգյան).

ա) Աճուրդի անցկացումից մեկ ամիս առաջ <<Հայաստանի Հանրապետություն>> օրաթերթում, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային www.azdarar.am կայքում և զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակել հայտարարություն սակարկությունների անցկացման տեղի, օրվա, ժամի, հողամասի գտնվելու վայրի, ծածկագրի, մեկնարկային գինի, օտարման նպատակի, չափի, ինչպես նաև տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայության մասին:

բ) Հողամասերի աճուրդը կազմակերպել Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-70-րդ հոդվածներով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

3. Հաստատել հրապարակային սակարկությունների հայտարարության տեքստը՝ համաձայն N 2 հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020 թվականի հուլիսի 20
քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի ԹԻՎ 218 ՈՐՈՇՄԱՆ

## Աճուրդով օտարվող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությանը համարվող (բնակավայր Հայկաձոր) գյուղատնտեսական նպատակային նշանակության արտա հողատեսքի հողամասերի մեկնարկային գներն ու պայմանները

| N | Հողամասի գտնվելու վայրը, հասցեն | Հողամասի ծածկագիրը, իրավունքների պետական գրանցման վկայական N | Հողամասի մակերեսը (հեկտար) | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը) | Հողի որակական հատկանիշը: Հողի կարգը | Հողի որակական հատկանիշը: Ջրովի, անջրդի | Օտարման նպատակը | Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ սերվիտուտ-ների) առկայությունը | Օտարման եղանակը | Տվյալ հողամասի մեկ հեկտարի կադաստրային արժեքը (դրամ) | Հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը` կադաստրային արժեքի նկատմամբ (%) | Տվյալ հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը (դրամ) | Աճուրդի նախավճարի չափը` մեկնարկային գնի նկատմամբ (%) | Գնային առաջարկի նվազագույն չափը մեկնարկային գնի նկատմամբ (%) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | ՀՀ Շիրակի մարզ, համայնք Անի, գյուղ Հայկաձոր, հողամաս | 08-059-0116-0041, 11072019-08-0017 | 7.183867 | Գյուղատնտեսական | Արոտ | IV | Անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում (անասունների արածեցում) | չկան | Բաց աճուրդ | 267 500 | 30.0 | 576 510 | 5 | 5 |
| 2. | ՀՀ Շիրակի մարզ, համայնք Անի, գյուղ Հայկաձոր, հողամաս | 08-059-0118-0039, 11072019-08-0018 | 0.49878 | Գյուղատնտեսական | Արոտ | IV | Անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում (անասունների արածեցում) | չկան | Բաց աճուրդ | 267 500 | 30.0 | 40 030 | 5 | 5 |
| 3. | ՀՀ Շիրակի մարզ, համայնք Անի, գյուղ Հայկաձոր, հողամաս | 08-059-0116-0042, 11072019-08-0005 | 0.272517 | Գյուղատնտեսական | Արոտ | IV | Անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում (անասունների արածեցում) | չկան | Բաց աճուրդ | 267 500 | 30.0 | 21 870 | 5 | 5 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՎԵԼՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի ԹԻՎ 218 ՈՐՈՇՄԱՆ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ (ԲՆԱԿԱՎԱՅՐ ՀԱՅԿԱՁՈՐ) ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Աճուրդի կազմակերպիչը՝ ՀՀ Շիրակի մարզի Անիի համայնքապետարան:
Աճուրդի անցկացման օրը՝ 2020 թվականի օգոստոսի 25-ին, ժամը՝ 12:00-ին:
Երկրորդ աճուրդի (կրկնաաճուրդի) անցկացման օրը՝ 2020 թվականի սեպտեմբերի 4-ին, ժամը՝ 12:00-ին:
Աճուրդի և կրկնաճուրդի անցկացման վայրը՝ ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկի երաժշտական դպրոցի շենք (հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ, Մաղաթյան 2):
Աճուրդի մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետը՝ 2020 թվականի օգոստոսի 21-ը ժամը՝ 18:00:
Երկրորդ աճուրդի (կրկնաաճուրդի) մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետը՝ 2020 թվականի օգոստոսի 31-ը ժամը՝ 18:00:
Աճուրդի և կրկնաաճուրդի նախավճարի չափը՝ մեկնարկային գնի նկատմամբ 5%:
Գնային առաջարկի նվազագույն չափը՝ մեկնարկային գնի նկատմամբ 5%,
Աճուրդի մասնակցության վճարի չափը՝ 5000 (հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
Աճուրդի հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:
Այլ մանրամասների համար դիմել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարան՝ աճուրդային հանձնաժողովին:
Աճուրդով օտարվող հողամասերի տվյալները, մեկնարկային գինն ու պայմանները՝

| N | Հողամասի գտնվելու վայրը, հասցեն | Հողամասի ծածկագիրը, իրավունքների պետական գրանցման վկայական N | Հողամասի մակերեսը (հեկտար) | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը) | Հողի որակական հատկանիշը | | Օտարման նպատակը | Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտ-ների) առկայությունը | Օտարման եղանակը | Տվյալ հողամասի մեկ հեկտարի կադաստրային արժեքը (ՀՀ դրամ) | Հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը՝ կադաստրային արժեքի նկատմամբ (%) | Տվյալ հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Հողի կարգը | Ջրովի, անջրդի | | | | | | |
| 1. | ՀՀ Շիրակի մարզ, համայնք Անի, գյուղ Հայկաձոր, հողամաս | 08-059-0116-0041, 11072019-08-0017 | 7.183867 | Գյուղատնտեսական | Արոտ | IV | Անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | չկան | Բաց աճուրդ | 267 500 | 30.0 | 576 510 |
| 2. | ՀՀ Շիրակի մարզ, համայնք Անի, գյուղ Հայկաձոր, հողամաս | 08-059-0118-0039, 11072019-08-0018 | 0.49878 | Գյուղատնտեսական | Արոտ | IV | Անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | չկան | Բաց աճուրդ | 267 500 | 30.0 | 40 030 |
| 3. | ՀՀ Շիրակի մարզ, համայնք Անի, գյուղ Հայկաձոր, հողամաս | 08-059-0116-0042, 11072019-08-0005 | 0.272517 | Գյուղատնտեսական | Արոտ | IV | Անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | չկան | Բաց աճուրդ | 267 500 | 30.0 | 21 870 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 219

20 հուլիսի 2020 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 17-ի թիվ 56, թիվ 58 և թիվ 59 որոշումները ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող /քաղաք Մարալիկ, բնակավայրեր՝ Լանջիկ և Բագրավան/ հողամասերի աճուրդ վաճառքն անցկացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցի շենքում (հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ, Մաղաթյան 2):
2. Աճուրդի անցկացման մասին տալ հայտարարություն <<Հայաստանի Հանրապետության>> օրաթերթում և զանգվածային լրատվության այլ միջոցներում:
3. Հաստատել հրապարակային սակարկությունների հայտարարության տեքստերը՝ համաձայն N 1,N 2 և N 3 հավելվածների:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյան

2020 թվականի հուլիսի 20
քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20–Ի N 219 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ԼԱՆՋԻԿ) ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Շիրակի մարզի Անիի համայնքապետարանը հայտարարում է աճուրդ-վաճառք, որը տեղի կունենա 2020 թվականի օգոստոսի 21-ին ժամը 14:00 –ին, Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցի շենքում (հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ, Մադաթյան 2):

Լոտ 2. Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Անի համայնք, Լանջիկ բնակավայրում գտնվող 1-ին փողոց 31/5 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով (կադաստրային ծածկագիր 08-044-0024-0029) 0.12 հեկտար հողատարածք:

Հողատարածքի մեկնարկային գին է սահմանվել 159 840 (մեկ հարյուր հիսունինը հազար ութ հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

Աճուրդի նախավճարի չափը կազմում է տվյալ հողամասի մեկնարկային գնի 5%-ը:

Աճուրդի մասնակցության վճարի չափը՝ 5000 (հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Աճուրդի մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետը՝ 2020 թվականի օգոստոսի 17-ը ժամը 18:00:

Այլ մանրամասների համար դիմել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարան՝ աճուրդային հանձնաժողովին:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյան

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20–Ի N 219 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ (ՔԱՂԱՔ ՄԱՐԱԼԻԿ) ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Շիրակի մարզի Անիի համայնքապետարանը հայտարարում է աճուրդ-վաճառք, որը տեղի կունենա 2020 թվականի օգոստոսի 28-ին ժամը 12:00–ին, Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցի շենքում (հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ, Մաղաքյան 2):

Լոտ 1. Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հրանտ Շահինյան փողոց 204/6 հասցեում գտնվող հասարակական կառուցապատման հողամասում առևտրի սրահ կառուցելու նպատակով (կադաստրային ծածկագիր 08-003-0020-0170)0.0098 հեկտար հողատարածք:

Հողատարածքի մեկնարկային գին է սահմանվել 51744 (հիսունմեկ հազար յոթ հարյուր քառասունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:

Աճուրդի նախավճարի չափը կազմում է տվյալ հողամասի մեկնարկային գնի 5%-ը:

Աճուրդի մասնակցության վճարի չափը՝ 5000 (հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Աճուրդի մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետը՝ 2020 թվականի օգոստոսի 24 -ը ժամը՝ 18:00:

Այլ մանրամասների համար դիմել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարան՝ աճուրդային հանձնաժողովին:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյան

ՀԱՎԵԼՎԱԾ N 3
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20–Ի N 219 ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ԲԱԳՐԱՎԱՆ) ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Շիրակի մարզի Անիի համայնքապետարանը հայտարարում է աճուրդ-վաճառք, որը տեղի կունենա 2020 թվականի օգոստոսի 28-ին ժամը 14:00–ին, Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցի շենքում (հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ, Մադաթյան 2):

Լոտ 3. Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Անի համայնք, Բագրավան բնակավայրում 14-րդ փողոց թիվ 10/1 հասցեում գտնվող բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում առևտրի և սպասարկման սրահ կառուցելու նպատակով (կադաստրային ծածկագիր 08-022-0034-0007) 0,031597 հեկտար հողատարածք:

Հողատարածքի մեկնարկային գին է սահմանվել 45 500 (քառասունհինգ հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:
Աճուրդի նախավճարի չափը կազմում է տվյալ հողամասի մեկնարկային գնի 5%-ը:
Աճուրդի մասնակցության վճարի չափը՝ 5000 (հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
Աճուրդի մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետը՝ 2020 թվականի օգոստոսի 24-ը ժամը՝ 18:00:
Այլ մանրամասների համար դիմել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարան՝ աճուրդային հանձնաժողովին:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ** N 220
21 հուլիսի 2020 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ /ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ՁԻԹՀԱՆՔՈՎ/ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԵՐԻՑ 08-072-0104-0023 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.14208 ՀԵԿՏԱՐ 4-ՐԴ ԿԱՐԳԻ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 4-րդ մասի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2019 թվականի փետրվարի 1-ի թիվ 7 որոշումը և 2020 թվականի հուլիսի 21-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցում կայացած մրցույթի արդյունքների վերաբերյալ կազմված 2020 թվականի հուլիսի 21-ի թիվ 2 արձանագրությունը, ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող /բնակավայր՝ Ձիթհանքով/ / 08-072-0104-0023 կադաստրային ծածկագրով/ 0.14208 հեկտար 4-րդ կարգի արոտավայրը (վկայական N 14012019-08-0016) գյուղատնտեսական գործունեություն ծավալելու /անասունների արածեցում/ նպատակով, 25 տարի ժամկետով, 2037 (երկու հազար երեսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ տարեկան վարձավճարով, վարձակալության տրամադրել մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակից, քաղաքացի՝ Ոսկան Մանուկի Հարությունյանին (բնակության հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Անի համայնք քաղաք Մարալիկ Մաղաքյան փողոց, շենք 17, բնակարան 14, նույնականացման քարտ՝ 009392440 տրված՝ 30.01.2018 թվական, 022-ի կողմից) և կնքել հողի վարձակալության պայմանագիր:

2. Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում ենթակա են պետական գրանցման՝ վարձակալի միջոցներով:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝** Արտակ Գևորգյան

2020 թվականի հուլիսի 21

քաղաք Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 221
21 հուլիսի 2020 թվականի

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՐԱՉԻԿ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ՍՈՖՅԱ ՆԻԿՈԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, ԱՐԱՄ ՀՐԱՉԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ՌՈՒԲԵՆ ՀՐԱՉԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արամ Հրաչիկի Սարգսյանի (ծնված 19□05□1980 թվականին ) կողմից դիմումը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Աղին բնակավայրի 3-րդ փողոց թիվ 11 հասցեում գտնվող հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0,12131 հեկտար ,որը սեփականության իրավունքով պատկանող հողամասն է /քաղվածք Անիի շրջխորհրդի գործկոմի 1994 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 11 որոշումից //:

Հաշվի առնելով,որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Աղին բնակավայրի 3-րդ փողոց թիվ 11 հասցեի բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին, հողամասը ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի հոդվածով որոշում եմ

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Աղին բնակավայրի 3-րդ փողոց թիվ 11 հասցեում գտնվող գույքային իրավունքների նկատմամբ Հրաչիկ Անդրանիկի Սարգսյանի (ծնված 16 հունվարի 1954 թվական), Սոֆյա Նիկոլի Գրիգորյանի ( ծնված 15 հունիսի 1957 թվական), Արամ Հրաչիկի Սարգսյանի (ծնված 19 մայիսի 1980 թվական) և Ռուբեն Հրաչիկի Սարգսյանի ( ծնված 20 հունիսի 1981 թվական), սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և

սպասարկման համար օրինական հատկացված 0,12131 հեկտար մակերեսով հողամասի չափով ճանաչել նրանց սեփականությունը և դրա վրա գտնվող մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված շենք-շինությունների նկատմամբ։

3. Հողամասի սահմանները որոշվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով։

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Անի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյան

2020 թվականի հուլիսի 21
քաղաք Մարալիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 222

24 հուլիսի 2020 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՈՐԱԿԱՊ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի դրույթներով *որոշում եմ՝*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Ջորակապ բնակավայրի բնակիչ Մուշեղ Գառնիկի Մկրտչյանին պատկանող բնակելի տունը համարակալել և հասցեավորել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք Ջորակապ բնակավայր 2-րդ փողոց, թիվ 36 տուն :

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անի համայնքի ղեկավար

Արտակ Գևորգյան

2020 թվականի հուլիսի 24

քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 223
28 հուլիսի 2020 թվականի

## ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ՕՏԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հարկային օրենսգրքի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 246-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի դրույթներով՝ *որոշում եմ*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրի բնակիչ Հռիփսիկ Համբարձումի Կարապետյանին հետ վճարել OPEL VECTRA C 2.2 մակնիշի 35DG722 պետհամարանիշով մեքենայի համար վճարված հետևանքով ավել վճարված 9193 (ինը հազար մեկ հարյուր իննսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամը:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար** **Արտակ Գևորգյան**

2020 թվականի հուլիսի 28

քաղաք Մարալիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 224
28 հուլիսի 2020 թվականի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով ***որոշում եմ***

Գործառական դասակարգման բաժին 06, խումբ 03, դաս 01 (ջրամատակարարում) և տնտեսագիտական դասակարգման 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի երրորդ եռամսյակի <<1000,0>> թիվը փոխարինել <<1400,0>> թվով, 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի երրորդ եռամսյակի <<21000,0>> թիվը փոխարինել <<20600,0>> թվով:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար** Արտակ Գևորգյան

2020 թվականի հուլիսի 28
քաղաք Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 225

28 հուլիսի 2020 թվականի

### ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերության, 8-րդ կետի, 12-րդ կետի 2-րդ ենթակետի և 20-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ ***որոշում եմ***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի 2020 թվականի կարիքների համար <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակի Լուսաղբյուր բնակավայրի ջրամատակարարման համակարգի կառուցման աշխատանքների>> նպատակով պատասխանատու ստորաբաժանում սահմանել հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ Կարեն Գրիգորյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդամներ՝ Մելս Մանուկյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լուսաղբյուր բնակավայրի վարչական ղեկավար

Սլավիկ Վարոսյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան բնակավայրի վարչական ղեկավար:

2.Սույն որոշման 1-ին կետով նախատեսված գնումների կատարման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի գնումների համակարգող Կարեն Նալբանդյանին:

3.Գնման հայտը հաստատելու համար պատասխանատու ստորաբաժանման նիստը հրավիրել 2020 թվականի հուլիսի 28-ին ժամը 12:00-ին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցում, Մաղաթյան 2 հասցեով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյան

2020 թվականի հուլիսի 28

քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 226

28 հուլիսի 2020 թվականի

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերության, 8-րդ կետի, 12-րդ կետի 2-րդ ենթակետի և 20-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ ***որոշում եմ***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կարիքների համար <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան, Սառնաղբյուր, Բագրավան, Լանջիկ, Հայկաձոր, Ջրափիի, Գուսանագյուղ, Զիթհանքով, Քարաբերդ բնակավայրերի, Մարալիկ քաղաքի փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում և 20 ԿՎՏ հզորությամբ արևային համակարգի տեղադրման և կառուցման աշխատանքների>> ձեռքբերման նպատակով պատասխանատու ստորաբաժանում սահմանել հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ Նարեկ Նիկոյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ

Անդամներ՝ Կարեն Գրիգորյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Տոնական Գրիգորյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի էլեկտրիկ:

2.Սույն որոշման 1-ին կետով նախատեսված գնումների կատարման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի գնումների համակարգող Կարեն Նալբանդյանին:

3.Գնման հայտը հաստատելու համար պատասխանատու ստորաբաժանման նիստը հրավիրել 2020 թվականի հուլիսի 28-ին ժամը 14:00-ին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցում, Մաղաքյան 2 հասցեով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյան

2020 թվականի հուլիսի 28
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 227

28 հուլիսի 2020 թվականի

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերության, 8-րդ կետի, 12-րդ կետի 2-րդ ենթակետի և 20-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ *որոշում եմ*

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի 2020 թվականի կարիքների համար << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կողմից գրասենյակային գույքի» ձեռքբերման նպատակով պատասխանատու ստորաբաժանում սահմանել հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Նարեկ Նիկոյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ

Անդամներ՝ Դարբինյան Մարտիրոս- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ

Քոչարյան Արմեն- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

2.Սույն որոշման 1-ին կետով նախատեսված գնումների կատարման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի գնումների համակարգող Կարեն Նալբանդյանին:

3.Գնման հայտը հաստատելու համար պատասխանատու ստորաբաժանման նիստը հրավիրել 2020 թվականի հուլիսի 28-ին ժամը 16:00-ին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցում, Մաղաթյան 2 հասցեով:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝** Արտակ Գևորգյան

2020 թվականի հուլիսի 28

քաղաք Մարալիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

## Ո Ր Ո Շ Ու Մ N 228

28 հուլիսի 2020 թվականի

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերության, 8-րդ կետի, 12-րդ կետի 2-րդ ենթակետի և 20-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ *որոշում եմ*

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի 2020 թվականի կարիքների համար <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կողմից համայնքային նշանակության ճանապարհների գծանշման աշխատանքների» ձեռքբերման նպատակով պատասխանատու ստորաբաժանում սահմանել հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Նարեկ Նիկոյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ:

Անդամներ՝ Դարբինյան Մարտիրոս- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ:

Արսեն Գասպարյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի օգնական:

2.Սույն որոշման 1-ին կետով նախատեսված գնումների կատարման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի գնումների համակարգող Կարեն Նալբանդյանին:

3.Գնման հայտը հաստատելու համար պատասխանատու ստորաբաժանման նիստը հրավիրել 2020 թվականի հուլիսի 28-ին ժամը 10:00-ին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցում, Մաղաթյան 2 հասցեով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյան

2020 թվականի հուլիսի 28

քաղաք Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 229

28 հուլիսի 2020 թվականի

### ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերության, 8-րդ կետի, 12-րդ կետի 2-րդ ենթակետի և 20-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի հետ կնքված Դրամաշնորհի ստացման N45 պայմանագիրը, ***որոշում եմ***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կողմից հրատապության հիմքով «Սննդամթերքի և հիգիենիկ պարագաների» ձեռքբերման նպատակով պատասխանատու ստորաբաժանում սահմանել հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Նարեկ Նիկոյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ
Անդամներ՝ Մարտիրոս Դարբինյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ
Քոչարյան Արմեն-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

2.Սույն որոշման 1-ին կետով նախատեսված գնումների կատարման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի գնումների համակարգող Կարեն Նալբանդյանին:

3.Գնման հայտը հաստատելու համար պատասխանատու ստորաբաժանման նիստը հրավիրել 2020 թվականի հուլիսի 28-ին ժամը 17:00-ին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցում, Մաղաքյան 2 հասցեով:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար** **Արտակ Գևորգյան**

2020 թվականի հուլիսի 28
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 230

31 հուլիսի 2020 թվականի

## ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության, 14-րդ, 15-րդ և 26-րդ կետերի դրույթներով՝ *որոշում եմ*

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի 2020 թվականի կարիքների համար <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի բնակավայրերի բազմաբնակարան և համայնքային նշանակության շենքերի կտուրների ընթացիկ վերանորոգման աշխատանքների>> ձեռքբերման նպատակով ձևավորել գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Արսեն Գասպարյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի օգնական

. Հանձնաժողովի անդամներ՝ Արտեմ Մանուկյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի տնտեսվար

Մաղեն Ղազարյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու անդամ

Հովհաննես Ալեքյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:
Գնահատող հանձնաժողովի քարտուղար-գնումների համագող՝ Կարեն Նալբանդյանին

3. Հայտարարության և հրավերի տեքստը հաստատելու համար գնահատող հանձնաժողովի առաջին նիստն հրավիրել 2020 թվականի օգոստոսի 5-ին, ժամը 12:00-ին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցում, Մաղաթյան 2 հասցեով:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար** Արտակ Գևորգյան

2020 թվականի հուլիսի 31
քաղաք Մարալիկ